# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 27 | Հուլիս | 2018 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 27 | Հուլիս | 2018 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 1359308251 |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| 18 Հունվար, 2018 թ. | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

| Արտադրանք, ապրանք առաքող անձի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 | 6 | 9 | 0 | 2 | 0 | 8 | 7 | |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 | 6 | 9 | 0 | 2 | 0 | 8 | 7 | / 1 |

| | | |
|---|---|---|
| [10] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) | |
| [11] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ | N 1570015001210100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 | |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 | |
| [14] Լրացուցիչ տվյալներ | | |

| Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 | 2 | 6 | 3 | 1 | 2 | 6 | 3 |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | | | | | | | |

| | | | |
|---|---|---|---|
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ | | |
| [18] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | N 900011000834 | |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | | |
| [20] Լրացուցիչ տվյալներ | | | |
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | | | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | | |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ բնապ. հարկ | Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 18101618 p/q, | հատ | 1 | 39400 | | 39400 | | |
| Ընդամենը | | | | | | 39400 | | |

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093

(անունը, ազգանունը)

Ստացող

(անունը, ազգանունը)

27/07/2018 14:47:36

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

16 ապրիլի 2018թ. ք. Գյումրի

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ՝ Վ.Բ. Սամվելյանս, քննարկելով վարույթիս 18101618 քրեական գործի նյութերը.

# Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի փետրվարի 24-ին ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի ՔՀԲ ավագ օպերլիազոր, ոստիկանության մայոր՝ Ա.Սարգսյանը զեկուցագիր է ներկայացրել այն մասին, որ նույն օրը ժամը 09:30-ի սահմաններում 094-78-91-70 բջջային հեռախոսահամարից իրեն է զանգահարել <<Արմոբիլ>> անվտանգության ծառայության պետ՝ Վլադիմիր Հենրիկի Այվազյանը և հայտնել, որ Գյումրի քաղաքի Բագրատունյաց օղակ 1/8 հասցեում գտնվող <<Վարկս.ամ>> վարկային կազմակերպության դիմաց մի երիտասարդ ոգելից խմիչք օգտագործած վիճակում բաճկոնի ծոցագրպանից հանել է կացինի նմանվող առարկա և վազել մեկ այլ երիտասարդի հետևից:

Նյութերի նախապատրաստման ընթացքում փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 24.02.2018 թվականին ժամը 9:30-ի սահմաններում Գյումրի քաղաքի Թամանյան փողոց 69 շենք 3-րդ բնակարանի բնակիչ՝ Արմեն Աշխարհաբերդի Գալոյանը Գյումրու Բագրատունյաց օղակ 8 շենք 1/8 հասցեում գործող <<Վարկս.ամ>> ՈՒՎԿ ՓԲԸ-ի մուտքի դռան դիմաց հայհոյանք է կատարել վարկ տրամադրելու կապակցությամբ մերժում ստանալու պատճառով, որը լսել են այդ ժամանակ մուտքի դռան մոտ կանգնած Գյումրի քաղաքի 221/176 տնակի բնակիչ՝ Արթուր Գագիկի Սարգսյանը և նրա մայրը, նույն հասցեի բնակչուհի Նատալիա Կորյունի Սարգսյանը: Վերը նշվածի կապակցությամբ Արմեն Գալոյանի և Արթուր Սարգսյանի միջև վիճաբանություն է առաջացել, որի ժամանակ Արթուր Սարգսյանն, գտնվելով ոգելից խմիչքի ազդեցության տակ, իր բաճկոնի տակից հանելով մուրճ-կացնիկը, այն պահել իր ձեռքում, ինչից Արմեն Գալոյանը վախեցել և փախչել է: Արթուր Սարգսյանը վազել է նրա հետևից, սակայն չի կարողացել հասնել Արմեն Գալոյանին, և հետ է վերադարձել <<Վարկս.ամ>> ՈՒՎԿ ՓԲԸ-ի մուտքի մոտ, որտեղից էլ բերման է ենթարկվել ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին: Արթուր Սարգսյանն իր բացատրությամբ նշել է, որ Արմեն Գալոյանին հարվածելու նպատակ չի ունեցել, այլ մուրճ-կացնիկը ձեռքում պահելով ցանկացել է կանխել իրենց միջև առաջացած վիճաբանությունը:

Նյութերի նախապատրաստման ընթացքում նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ և համաձայն փորձագետի թիվ 0292 և 0294 եզրակացությունների, համապատասխանաբար Արմեն Գալոյանի և Արթուր Սարգսյանի մարմնի վրա ներկա փորձաքննությամբ մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել:

Փորձագետի թիվ 51-18 եզրակացության, ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրիքաղաքի Կումայրիի բաժնի ՔՀԲ ավագ օպերլիազոր, ոստիկանության մայոր՝ Ա. Սարգսյանի զեկուցագրի վերաբերյալ նախապատրաստված նյութերով փորձաքննության ներկայացված մուրճ-կացնիկը պատրաստված է գործարանային եղանակով և սառը զենք չի հանդիսանում:

Գյումրու հոգեկան առողջության կենտրոնից 01.03.2018թ ստացված թիվ 135 տեղեկանքի Արթուր Գագիկի Սարգսյանը Գյումրու հոգեկան առողջության կենտրոնի նյարդահոգեբուժական դիսպանսերում հաշվառման մեջ չի գտնվում, իսկ նույն կենտրոնից ստացված թիվ 129 տեղեկանքի համաձայն Արթուր Գագիկի Սարգսյանը 02.08.2017թվականից բուժման մեջ է գտնվում Գյումրու Հոգեկան առողջության կենտրոնի նարկոլոգիական դիսպանսերում կանաբինոիդների օգտագործում /ըստ նարկոլոգիական հանրապետական կենտրոնի գրության/ ախտորոշմամբ:

Գյումրու հոգեկան առողջության կենտրոնից 01.03.2018թ ստացված թիվ 134 տեղեկանքի Արմեն Աշխարհաբերդի Գալոյանը 07.11.1991 թվականից <<Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն>> ախտորոշմամբ հաշվառման և բուժման մեջ է գտնվում Գյումրու Հոգեկան առողջության կենտրոնի հոգեբուժական ծառայությունում, իսկ նույն կենտրոնից ստացված թիվ 130 տեղեկանքի համաձայն Արմեն Աշխարհաբերդի Գալոյանը Գյումրու Հոգեկան առողջության կենտրոնի նարկոլոգիական դիսպանսերում հաշվառման մեջ չի գտնվում:

Նկատի ունենալով, որ Արմեն Գալոյանը <<Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն>> ախտորոշմամբ հաշվառման և բուժման մեջ է գտնվում Գյումրու հոգեկան առողջության կենտրոնի հոգեբուժական ծառայությունում, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը 28.12.2008 թվականին Արմեն Զախարի Աբրահամյանի վերաբերյալ թիվ ՎԲ 73/08 գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ <<...մասնավոր հետապնդման գործերով <<դիմող>> դիտվում է այն անձը, ում իրավունքները խախտվել են քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով, ինչպես նաև նրանց, ովքեր օրենքի ուժով հանդիսանում են անչափահաս կամ անգործունակ անձանց օրինական ներկայացուցիչներ, եթե խախտվել են նրանց խնամակալների իրավունքները: Վերոնշյալ դիրքորոշումից բացառություն է այն դեպքը, երբ անձը ում իրավունքները խախտվել են, իր անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքները և օրինական շահերը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման իրավիճակներում քրեական գործ հարուցելու առիթն օրինական, իսկ հիմքերը բավարար լինելու դեպքում քրեական գործ հարուցելու մասին որոշում պետք է կայացվի հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով>>, ուստի տվյալ դեպքում ևս քրեական գործ հարուցելու մասին որոշում պետք է կայացվի հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով:

Փաստի առթիվ 06.03.2018թ. ոստիկանության Կումայրիի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 68152618 քրեական գործը և ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչություն, որն ընդունվել է վարույթ:

2018 թվականի մարտի 06-ին, ժամը 04:20-ի սահմաններում, Գյումրի քաղաքի բնակիչ Արթուր Գագիկի Սարգսյանը, կանացի զուգագուլպայով դիմակավորված, կոտրել է նույն քաղաքի Գ.Նժդեհի փողոցի 30/6 հասցեում գտնվող, գետնանցումում տեղակայված Գևորգ Գառնիկի Փիրոյանին պատկանող խանութի մուտքի դռան ապակին, ապօրինի մուտք գործել խանութ, որտեղից փորձել է հափշտակել բջջային հեռախոսներ ու աքսեսուարներ, որի ընթացքում հանդիպելով ահազանգման համակարգը միանալուց հետո դեպքի վայր ժամանած «Գրոմ-Սեքյուրեթի» ՍՊ ընկերության անվտանգության աշխատակիցներ՝ Գագիկ Համլետի Ավագյանին ու Արթուր Գագիկի Գրիգորյանին, վերջինիս պահանջով դուրս է եկել խանութից՝ իր հետ դուրս բերելով գողոնը, ինչից հետո Արթուր Գրիգորյանի առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով ուսով հարվածել է նրան և դեպքի վայրից փախուստի փորձ կատարելով, անցնելով 3-4 մետր տարածություն՝ փորձել բացահայտ հափշտակել բջջային հեռախոսներն ու աքսեսուարները, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չի հասցրել, քանի որ Արթուր Գրիգորյանի և Գագիկ Ավագյանի գործողությունների արդյունքում կանխվել է Արթուր Սարգսյանի փախուստը, ապա դեպքի վայր ահազանգով մեկնած ՀՀ ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի աշխատակիցների կողմից Արթուր Սարգսյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում 2018 թվականի մարտի 06-ին ՀՀ քրեական օրենսգրքի 34-176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 18101618 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

2018թ. մարտի 08-ին որոշում է կայացվել Արթուր Գագիկի Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Նույն օրը նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Գյումրու զինվորական կոմիսարիատից ստացված գրության համաձայն 19.04.1988թ. ծնված Արթուր Գագիկի Սարգսյանը չի ծառայել ՀՀ ԶՈՒ-ում 410/13թ. հրամանի 1-ին սյունակի 8 <<բ>> հոդվածի համաձայն.

Ց-անձնային խանգարումներ,

<<բ>> հաճախակի դեկոմպենսացիաներով անձի խանգարումներ, ինչպես նաև կրկնվող իրավիճակային և անձնային ռեակցիաներ, որոնց հաճախականությունը մեկ տարվա ընթացքում 3 / երեք / անգամ և ավելի է:

15.10.2007թ.-ից մինչև օրս կանգնած է Գյումրիի զինվորական կոմիսարիատի պահեստազորի սերժանտ-շարքայինների հաշվառման բաժանմունքում:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-245-րդ, 248-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. 18101618 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետներին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներրով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2. Փորձագետների պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը՝

- Մեղադրյալ Արթուր Գագիկի Սարգսյանը նախկինում և հանրորեն վտանգավոր արարքները կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հիվանդությամբ է տառապել և երբվանից:
- Եթե Արթուր Գագիկի Սարգսյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկել է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:
- Արթուր Գագիկի Սարգսյանը ներկայումս տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի:
- Եթե Արթուր Գագիկի Սարգսյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկում է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:
- Արթուր Գագիկի Սարգսյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:
- Արթուր Գագիկի Սարգսյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում և հակացուցված չէ արդյոք բուժումը:

3. Փորձագետներին տրամադրել քրեական գործի նյութերը և փորձաքննության ներկայացնել մեղադրյալ՝ Արթուր Գագիկի Սարգսյանին վերջիններիս պահանջով:

ՀԿԳ ավագ քննիչ՝ Վ.Բ. Սամվելյան